Արձանագրություն 3

ՀՀՍՊԳՀԱՊՁԲ-19/37 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մարզական գույքի /N 3/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17.10.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Լոռեցյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Եղոյան /գնահատող/
Անահիտ Կարապետյան /գնահատող/
Լյովա Վարդանյան /բացող/
Ռաֆայել Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. **Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին**
2.
(Գ. Լոռեցյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի <<Էլիտ Սպորտ>> ՍՊԸ-ն և Կարեն Գեղամյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.2 <<Էլիտ Սպորտ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է 2-րդ չափաբաժնի համար հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.3 Կարեն Գեղամյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել է 1-ին չափաբաժնի համար հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, սակայն ներկայացրել է գրություն, առանց էլեկտրոնային թվային ստորագրության, որով տեղեկացրել է, որ 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկում թյուրիմացաբար նշվել է ապրանքի միավորի գինը, ինչի պատճառով վերջինս հրաժարվում է ներկայացնել հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Գ. Լոռեցյան)

2.1 <<Էլիտ Սպորտ>> ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Հավելված 3.1-ում առկա է անհամապատասխանություն առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, արտադրողի անվանման և տեխնիկական-բնութագրի սյունակներում լրացված նկարագրերի միջև:

- Տեխնիկական-բնութագրով առաջարկված ապրանքը հստակ չէ, քանի որ նշվել է <<կամ համարժեք>> բառերը:

- Ներկայացված 17.11.2016թ ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության հետ կնքված պայմանագիրը և դրան առնչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով << կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունները, իսկ Կարեն Գեղամյան Ա/Ձ-ին ներկայացնել հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Գ. Լոռեցյան /նախագահ/

_____ Հ. Եղոյան

_____ Ա. Կարապետյան

_____ Լ. Վարդանյան

_____ Ռ. Հարությունյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/